

տեղերնէս պէտք չէ շարժինք „ կ'ըսէ արտուտը . | լրաւունք ունի եղեր . վասն զի երկրորդ օրն ալ մարդ մը չի-գար , լորէն կուգայ արտին տէրը , կը նայի որ մարդ չկայ . “ Ը ատ ան-խելք ենք եղեր մենք , կ'ըսէ որդւոյն , որ մեր ձեռքէն եկածը ուրիշ կը թո-ղունք . մարդուս համար իրմէ մօտիկ ոչ բարեկամ կայ՝ ոչ ազգական , իմա-ցա՞ր որդի . աս խօսքս անկըծիդ օղ ըլ-լայ : Հիմա գիտես ինչ ընելու է . վա-զը առաւաւոտ ես ու դուն ու եղարքդ մէկ կ'ըլլանք , կ'առնենք մանգազը , ցորեննիս կը կտրենք կը լընցընենք . ասկէց աղէկը չկայ . . . | լրտուտը աս բանս լսելուն պէս , “ Ը ուտ ըրէք ձագուեներս , կ'ըսէ . Հիմա ահա փախ չելու ատենն է . . . անոնք ալ թուը-տելով գլորտը կելով կ'ելլեն անկէ ա-պահով տեղ մը կը քաշուին կ'ազա-տին :

## ԲԱՆԱՍՏՐԱԿԱՆ ՏԵՂԱԿՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՄՀԱԳՐՈՒԹԻՒՆ


‘ լեզու :

ՀԻՆ ու նոր պատմութեանց և աշ-խարհագրութեանց մէջ խիստ անուա-նի է ‘ լեզոս գետը . վասն զի լրդիպ-տոսի բերքերուն առատութեանը մի միայն պատճառը աս գետին տարուէ տարի կանոնաւոր կերպով ցածնալն ու բարձրանալն է . ուստի ըստ Տաճ-կաց՝ իբր թէ սեպհականեալանուամբ ‘ լիէլ ժաղարէտ , այսինքն օրհնեան ‘ լե-զոս կ'ըսուի : Մս գետը լրդովպիայէն այսինքն Հապէշտանէն ‘ լուպիա կ'անցնի , ու հին Ո՛եմիփիս քաղաքին քովը զանազան Ճիւղեր բաժնուած՝ ծովը կը թափի . աս Ճիւղերուն մէջ մեծերը Ո՛եշիտի ու Տիմիաթի քովիններն են :

‘ լեզոսի աճումը ամէն ամառ յու-նիսի 17<sup>են</sup> կը սկսի , ու ինչուան սեպ-տեմբեր ամսուն կէսը միակերպ կ'ա-

շի . թէպէտ Տաճկըները օգոստոսի 13<sup>ին</sup> ( ըստ նոր տոմարի ) կը դնեն ‘ լե-զոսի աճելուն սկիզբը : Մս աճման պատճառը լրդովպիայի մէջ ան ա-տենները եկած կանոնաւոր անձրե-ներն են . ասոնք երբեմն անանկ սաս-տիկ կ'ըլլան՝ որ բոլոր դաշտերն ու քա-զաքներուն փողոցները ջրով կը ծած-կուին : Ատորին լրդիպտոսի մէջ խիստ քիչ անձրե կուգայ , ու վերին լրդիպ-տոսի մէջ ‘ լեզոս գետին աճումը ան-ձրեի տեղ կը բռնէ . իսկ երբոր քա-շուի , պտղաբեր ու կակուղ աւազ մը կը ձգէ , որով երկիրը հերկելու ու մէջը պարարտութիւն ձգելու գրե-թէ ամենեին հարկ ըրլար . վասն զի քիչ աշխատանքով ու առանց ծախքի ան աւազը հողին հետ կը խառնեն և ուղածնին կը ցանեն մէջը : Բնդհան-րապէս հօկտեմբերի ու նոյեմբերի մէջ ցանել կը սկսին , ու երկու ամսէն բոլոր ընդեղէններն ու ցորենը անանկ աղէկ առաջ կուգան որ մարտի ու ապրիլի մէջ կը հնձուին :

Օ արմանալին աս է որ ‘ լեզոսին աճումը ընդհանրապէս ամէն տարի նոյն է . ապա թէ ոչ , քիչ մը աւելի կամպակաս որ ըլլայ՝ մեծամեծ վնաս-ներ կը պատճառէ : Ուէ որ 16 կամ 15 կանգունէն պակաս ըլլայ , մեծ սով կ'իյնայ . ընդհակառակն թէ որ սովորականէն աւելի բարձրանալու ըլլայ , շատ տներ կը ծածկուին ու շատ կենդանիներ ջրին մէջ կը խղդուին . ետքը ասոնց սատակէն Ճճիներ գոյա-նալով լրդիպտոսի պտուղներն ու արմտիքը կ'ուտեն կը փճացընեն : Բ-սոր համար հին լրդիպտացիք որպէս զի ‘ լեզոսին բարձրանալուն չափը գիտնան , տեղ տեղ սիւներ հաստա-տեցին՝ աստիճան աստիճան բաժ-նած . և ասոնք են ահա ‘ լեզոսա-չափ՝ ըսուած սիւները : Ո՛եր հոս գը-րած պատկերը՝ Պահիրէ քաղաքը մզկթի մը մէջ եղած նեղոսաչափն է , որ մեծ ու քառակուսի կրանիթ քա-րէ սիւն մըն է՝ քսանուերկու հաւա-



## “Եղոսական” :

սար մաս բաժնած . աս ամէն մէկ մաս սերն ալ քսանուչորս մանրամաս բաժնած է , ու վրայի նշաններէն ջրին որչափ բարձրանալը կ'իմացուի . ընդհանրապէս օրը երկու բժաշափէն ինչուանն չորս բժաշափ կրնայ բարձրանալ : Գետին ջուրը քանի որ լեցուած չէ , Գահիրէի մէջ եղած ջրանցքը կը մաքրեն ու բերանը կը գոյեն . ու երբ որ գետը բաւական ածի , ան ատեն բռնը մեծամեծները մէկ կ'ըլլան ու կ'երթան հանդիսով բերանը կը բանան . որով ջուրը գաշտերուն մէջ կամաց կամաց կը տարածուի :

“Եղոսի ջրին մէկ մասնաւոր յատկութին ալ աս է որ չոստիր ու անապական կը մնայ կ'ըսեն . ասկէց է որ ստորին լագիպտոսի մէջ ջերմախտը խիստ քիչ է , որ այնչափ բընձի արտերուն շատութեանը նայելով՝ շատ աւելի պիտի ըլլար . թէպէտ ոմանք կ'ըսեն թէ լագիպտոսի ժանտախտին մէկ պատճառն ալ՝ “Եղոսի քաշուելէն ետքը մնացած ու լճացած ջրերուն հոտն է :

Օ արմանալի բան մըն ալ աս է որ “Եղոսի յորդութիւնը ամէն մասին մէջ հաւասար է՝ տեղերուն դրիցը ու բարձրութեանը համեմատ : Դ'անապարհորդ մը կ'ըսէ թէ վերին լագիպտոսը ծածկելու համար պէտք է որ “Եղոսը 25 ոտք բարձրանայ , իսկ ստորին մասին մէջ 15 ոտք ալ բաւական է . ասիկայ երկու բանէ կրնայ առաջ գալ . մէյմը որ “Եղոսի բերանը վերին լագիպտոսի մէջ խիստ նեղ է , ու քանի կ'երթայ կը լայննայ . մէյմ'ալ որ վերին լագիպտոսը աւելի բարձր ըլլալով՝ յայտնի է որ շատ աւելի ջուր պէտք է՝ ստորին մասին մէջ եղած ջրին հետ հաւասարելու համար :

Հին լագիպտացիք “Եղոսը ասանկ զարմանալի յատկութիւններ ունենալուն համար աստուածոց կարգը անցուցին : Ա ատիկանի գեղեցիկ հընութիւններուն՝ մէկը սեպուած է նաև “Եղոսի արձանը՝ անձնաւորած , որ ալիքներու մէջ կեցած , մէկ ձեռքովը լիփինքսի՝ մը վրայ կոթնած է ( որ 1 Սփինքսին վրայ տես հատ . գ . էջ 120 :

Եղիպտոսի նշանն էր ), մէկալ ձեռքն ալ ամաղթեղջիւր կամ առատութեն նշանը . չորս դին տասնուվեց մանր տղաք կան՝ |, եղոսի 16 կանգուն բարձրանալուն նշան . քովն ալ կոկորդիւրներ , քաջահաւեր և ուրիշ եգիպտական թռչուններ ձեւացուցած է :

Գ. Զ.

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

## | Ա-Ր-Ե-Ր :

ԿԱՐՈԼՈՍ ԳԵՐՄԱՆԻՈՅ ԿԱՅՍՐԸ ՄԵԱՆԵԼՈՎ ՈՐ | ՊՈւտեր կատաղութեամբ կուրցած՝ մոլորութեանց մէկ փոսէն մէկալը կը գլորի , ու հեղեղի պէս իր եսւեն կը քաշէ կը տանի Գերմանիոյ մեծ մասը , ժողովք մը ըրաւ | Որմն քաղաքը , | Պուտերն ալ հոն կանչեց : Ի՞ս ամբարտաւան աղանդապետը , որ իր ողորմելի վիճակէն յանկարծ առաքեալ ու օրէնսդիր եղեր էր Գերմանիոյ մեծ մասին , յանդուզն համարձակութեամբ հարիւր զրահաւոր ազնուականներով , կառքի մէջ նստած՝ մեծ հանդիսով մասաւ | Որմն . Շայց այսպիսի ամբարտաւան աղանդապետէ մը ի՞նչ յոյս կրնայ ըլլալ դարձի և ուղղութեան . աւելի դիւրին է քարէն ջուր բխեցընել քան թէ այսպիսի քարացեալ սրտէ մը շըշմարտութեան դաւանութիւնը լսել : Տեսնելով կայսրը | Պուտերին յամառութիւնը , հրաման հանեց որ քսան օրուան մէջ ելլէ իր կայսերութեան երկրէն ու երթայ ուր որ կ'ուզէ : Այսոնիայի կայսրընտիրը իր պաշտպանութեն տակն առաւ զ | Պուտերը . անիկայ ալ ինն ամիս բերդ մը փակուած ( որ ինքը Պատմոս կղզի կը կոչէ ) նոր նոր մոլորութիւններ կը հանէր , ու իր ըսածին պէս՝ սատանային ազգեցութերը լուսաւորուած , մանաւանդ թէ չարաչար խաւարած ,

1 Առջի հատուածը տես երես 166 :

մերժեց նաև թիւ պատարագը<sup>1</sup> , չոն թարգմաննեց նաև նոր կտակարանը յունարէնէն գերմաներէն ուղածին պէս՝ աւելի ու պակաս : Ետքը ծատեալ ելաւ մասնաւոր ջանքով մը միաբանելու իր աշակերտները , որ ամէն մէկը մէյմէկ աղանդի գլուխ եղեր էին . վասն զի մէկն որ ձշմարտութեան կէտէն կը շարժի՝ չկըրնարուիշ հաստատ կէտ մը գտնել . արմատովը ելած բուսոյ պէս տեղէ տեղ բարբարական կ'ըլլայ՝ ինչուան որ խաւար փոսի մը մէջ կորսուի : Որոնք որ իրեն մտիկ չէին ըներ՝ կատաղութեամբ կը հալածէր , ու հայհոյութեամբ սատանայի կը մատնէր զանոնք : Ի՞սպէս իրեւ վայրենի խոզ մը ՚իրիստոսի անդաստանը ապականելէն ետքը , աս աղանդապետը՝ անամօթութեամբ կարգուեցաւ միանձնացած կուսի մը հետ՝ որ իր գրուածքովը մոլորցուցեր էր : Ի՞ստուծոյ ահաւոր արդարութիւնը շատ անդամ այսպիսի ամբարտաւանները խաղք ընելու համար՝ ամօթալի կրից խաղալիկ կ'ընէ զիրենք . ասանկ ալ | Պուտեր եղաւ , որ ինքն իր վրան զարմանալով կ'ըսէր . “ Քանի որ ուղղափառ եկեղեցւոյ մէջ էի , Ճգնաւորական կեանք մը ունեցայ՝ հսկմամբ , պահօք , աղքատութեամբ , ողջախոհութեամբ ու հնազանդութեամբ . քանի որ աս նոր Ճամբան բացի , չեմ գիտեր ի՞նչ եղայ . ալ ձեռքս չէ ողջախոհ կեանք ունենալը , ” Պատճառը . “ Ամտնեաց զնոսա իստուած , կ'ըսէ Պօղոս առաքեալը , ” ի ցանկութիւն սրտից նոցա ’ի պղծութիւն , անարգել զմարմինս իւրեանց յանձինս իւրեանց , որք փոխանակեցին զՃշմարտութիւնն Ի՞ստուծոյ ընդ ստութեան , ” : Ի՞սկէց վերջը կը սարսափի մարդ ու կը զցուի

<sup>1</sup> Թէպէտ աս բանիս վրայ ամշնալով իրեն հետեւողները կ'ուզեն սուտ հանել , բայց Լուտեր իր գրուածոցը մէջ՝ որ իր կենդանութեան ատեն արպուցան , կը պատմէ թէ ի՞նչպէս արթնութեանը ատեն ունեցաւ աս ընտանի խօսակցութիւնը սատանային հետ :